

# ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸ ԵՎ ՄԵՏԱԴԱԶՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՍՍՏԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի՝ որպես մետաղի արդյունահանման և, հատկապես, երկաթի մշակույթի հնագույն կենտրոնի մասին կարծիքը Հին Արևելքի պատմությունն ուսումնասիրողների մոտ ձևավորվել է դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսերին: Վերջին տարիներս այդ պատկերացումները հաստատում են գտնում և զարգացվում մեզ մոտ մի շարք մասնագետների կողմից, որոնց թվում հատկապես արժանահիշատակ են Ե. Ն. Չերնիխի աշխատանքները<sup>1</sup>:

Մինչև վերջերս նշված պատկերացումների հիմքում գերադասապես ընկած էին հին աղբյուրներից, ինչպես նաև Հայաստանը շրջապատող երկրներում հայտնաբերված մետաղագործական հուշարձանների համեմատական ուսումնասիրություններից քաղվող կողմնակի տվյալները: Այս առթիվ կան բազմաթիվ ուշագրավ հիշատակություններ, որոնցից արժե նշել մի քանիսը:

Այսպես՝ Հորդոն Զայլը գտնում է, որ «Մետաղագործության սկզբնական օրրանը գտնվում էր Անդրկովկասում»<sup>2</sup>:

Համաձայն Գ. Ռ. Հոլլի՝ «Եգիպտացիները, անկասկած, պղնձի մշակման սովորույթները ձեռք են բերել Միջագետքից՝ Սիրիայի վրայով, ըստ երևույթին «արմենոիդ» ցեղի ներկայացուցիչներից, որոնք ներքին Նգիպտոսում, ըստ երևույթին հայտնվել են մինչդի-նաստիական դարաշրջանի վերջից շատ առաջ...»: Միանգամայն հավանական է, որ «արմենոիդները», եթե իսկապես նրանք իրենց հետ բերել են պղինձ, այն սկզբնապես արդյունահանել են ավելի հյուսիս գտնվող որևէ վայրում, մասնավորապես, ժամանակակից Հայաստանի լեռներում, որտեղ, անկասկած, սկզբնապես արդյունահանում էին նաև միջագետքից»<sup>3</sup>:

<sup>1</sup> Черных Е. Н., Спектральный анализ и изучение древнейшей металлургии Восточной Европы, Археология и естественные науки, М., 1965. Его же, История древнейшей металлургии Восточной Европы, М., 1966, стр. 46—47

<sup>2</sup> Чайлд Гордон, Древнейший Восток в свете новых раскопок, 1956.

<sup>3</sup> Дикши С. К., Введение в археологию, 1960, М., стр. 272.

Ս. Կ. Դիկշիտը իր աշխատությունում մեջ է բերում Հ. Չայլդի՝  
այն կարծիքը, որ երկաթի ձուլման արդյունավետ եղանակի հայտ-  
նագործումը, որը եղել է շատ ավելի վաղ նրա տարածումից, պատ-  
կանում է Հայկական լեռնաշխարհի ցեղերին: Բացի այդ Ս. Կ. Դիկ-  
շիտը նշում է նաև, որ «Երկաթի դարի հետ կապված հեղաշրջում-  
ները տեղի են ունեցել, ըստ երևույթի, մ. թ. ա. 2-րդ հազարամ-  
յակի երկրորդ կեսին: Այդ հեղաշրջման ալիքը, այսպես ասած,  
հեղաշրջման էպիկենտրոնից, որ գտնվում էր Կովկասում՝ հայկա-  
կան լեռներում, հեռու ընկած շրջաններն է հասել ընդհանուր առ-  
մամբ ավելի ուշ: Եվ, «վերջապես, բոլոր տվյալները խոսում են  
այն բանի օգտին, որ երկաթի դարի քաղաքակրթության ստեղծման  
առաջնությունն ու պատիվը պատկանում է ինչ-որ հնդեվրոպա-  
կան ցեղերի, որոնց մեջ ամենապատվավոր տեղը, անկասկած,  
դրադենում են Հայաստանի խեթերը»<sup>1</sup>:

Հայկական լեռնաշխարհից մետաղի արտահանությունը կա-  
տարվում էր փնչպես խաղաղ ճանապարհով՝ առևտրական փոխա-  
նակությունների, նվիրատվությունների, օժիտների ձևով, նույնպե-  
սե և ուժի միջոցով՝ ռազմական բռնագրավումների ձևով: Հատկանշա-  
կան է, որ առևտրական փոխանակությունները կատարվում էին  
մասնագիտացված համայնքների միջնորդությամբ<sup>2</sup>:

Որպես մետաղի մատակարարման հիմնական շրջաններ, հին  
եգիպտական և ասուրա-բաբելական աղբյուրներում հաճախակի  
նշվում են Հայկական Տավրոսը, Ալշե (Հայկական Աղձնիք) եր-  
կիրը, Վանի և Ուրմիո լճերի ավազանները, իսկ հունական աղբյուր-  
ներում՝ Փոքր Հայքը:

Այս շրջաններում, անկասկած, բարձր զարգացման էր հասած  
լեռնահանքային գործը և մետաղամշակությունը: Վերջին տարիներին  
կատարված ուսումնասիրություններից ձեռք բերված ար-  
դյունքները թույլ են տալիս շեշտելու, որ արտագրության նշված  
ճյուղերը բարձր զարգացման էին հասել նաև Հայկական լեռնաշ-

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 422:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 425:

<sup>3</sup> Landsberger Benno, Assyrische Handelskolonien in Kleina-  
sien aus dem dritten Jahrtausende, 1925.



խարհի մի մասը կաղմող, ներկայիս Սովետական Հայաստանի հանրապետության տերիտորիայում, հետևաբար, ընդհանրապես Հայկական լեռնաշխարհում: Տվյալ գնալըմ հին աղբյուրներում նշված շրջանների «առավելությունը», ըստ երևույթին, բացառվում է նշված երկրների նկատմամբ նրանց գրաված սահմաններ՝ դիրքով:

Մետաղի, հավանաբար նաև հանքանյութի, արտահանման մասին ամենահին տեղեկությունները ասորեստանյան աղբյուրներում վերագրվում են մ. թ. ա. XIII դարին՝ Սալմանասար I-ի և Թուրուլտի Նինուրտի I-ի արձանագրություններում հանդիպող նախի երկրից վերցվող «լեռների ծանր տուրքեր», «լեռների հարուստություններ» արտահայտությունների ձևով: Մ. թ. ա. XI—VII դդ. վերագրվող արձանագրություններում արդեն խոսվում է պղնձի, անագապղնձի, ոսկու, արծաթի, երկաթի և այլ հանքային հարստությունների կողոպուտի մասին:

Արտահանման մասշտաբների մասին գաղափար է տալիս մ. թ. ա. 714 թ. Սարգոն II-ի դեպի վանի թագավորությունը կատարած արշավանքի մանրամասն նկարագրությունը:

Մուսասիր քաղաքի թագավորական պալատից թալանված իրերի շարքում նշվում է 34 տաղանդ 18 մին ոսկի (մոտավորապես 1040 կգ), 167 տաղանդ և կես մին արծաթ (5060 կգ), մաքուր պղինձ, կապար, սերգուրիկ, լազուրիտ և մեծ քանակությամբ այլ թանկարժեք քարեր: Նույն տեղում, գերագույն աստիճանից տաճարից, բացի մեծ քանակությամբ ոսկուց (թիվը չի պահպանվել), տարվել է 162 տաղանդ և 20 մին արծաթ (5000 կգ), 109 տոնն պղինձ, ոսկե 6 վահան՝ 156 կգ ընդհանուր քաշով, դուռն ոսկե հարմարանքներ և զարդեր 126 կգ, ոսկե թուր՝ 134 կգ, արծաթե 33 մարտականք, արծաթե 12 վահան, արծաթե 400 թաս, 25 հաղարից ավելի պղնձե վահան, պղնձե 305 թուր, նիզակ, նետ, աստվածների 4 և թագավորների 3 արձան՝ պղնձից և անագապղնձից, յուրաքանչյուր արձանի կշիռը մոտ 1800 կգ և այլ իրեր:

Այսպիսով, Մուսասիրից ընդհանուր առմամբ դուրս է բերվել 2 տոննից ավելի ոսկի, 10 տոնն արծաթ, հարյուրավոր տոնն պղինձ և այլն<sup>1</sup>:

Պատմական Հայաստանում լեռնահանքային գործի, մետաղամշակության բարձր մակարդակի և մեծ մասշտաբների մասին

<sup>1</sup> Дьяконов И. М., Ассирио-вавилонские источники по истории Урарту. «Вестник Древней истории», №№ 2, 3, 1951.

բաղմամբիլ տեղեկութիւններ կան պահպանված նաև հին հունական և հայկական աղբյուրներում, որոնց արժանահավատութիւնը ապացուցվում է Հայկական ՍՍՀ տերիտորիայում վերջին տասնամյակում հայտնաբերված հին հանքավայրերի շահագործման և մետաղաձուլութիւն 600-ից ավելի տեղավայրերից ստացված տվյալներով:

Ըստ իրենց բնույթի, նշված հնավայրերը կարելի է բաժանել երեք խմբի. ա) լեռնահանքային. հնում շահագործված կամ հետախուզված հանքավայրեր, բ) լեռնամետաղագործական. հին մասնագիտացված բնակատեղիներ հանքավայրերին կից կամ նրանցից հեռու, որտեղ կենտրոնացված էր հանքանյութերի վերամշակումն ու ձուլումը և գ) հին բնակավայրեր, տեղական կարիքների համար գործող մետաղագործական արհեստանոցներով: Հայտնաբերված հուշարձանների նախնական ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Հայաստանում հնագույն ժամանակներից սկսած արդյունահանվել և վերամշակվել են հանքանյութերի բոլոր հիմնական խմբերը՝ պղնձի, կապարի-ցինկի, մկնդեղի, ծարիրի, մանգանի, ոսկու, արծաթի և, հավանաբար, սնդիկի: Լայն կերպով արդյունահանվում էին նաև ոչ մետաղական հանածոները՝ ագատ, խալցեդան, յաշմաներ, լազուրիտ, բյուրեղապակի, օնիքս, մարմար, հրակայուն փայտեր, աղ, նավթ, բնական ներկանյութեր և այլն:

Հանքավայրերի շահագործման և հանքանյութերի վերամշակման հետքերը մի շարք դեպքերում վճռական նշանակութիւն են ունեցել և հիմա էլ ունեն մեր օրերում այդ հանքավայրերը վերահայտնաբերելու գործում: Այսպես օրինակ, ընդամենը մի երկու տասնամյակ առաջ երկրաբանների ճնշող մեծամասնութիւնը Փոքր Կովկասը, այդ թվում նաև Հայկական ՍՍՀ տերիտորիան, ոսկեբերութիւն տեսակետից անհեռանկարային էր համարում: Միայն առանձին հետազոտողների համառ ջանքերի շնորհիվ հայտնաբերվեցին ոսկու մի շարք հանքավայրեր, և որ հատկանշական է, բոլոր դեպքերում շարժվելով շահագործման հին փորվածքների հետքերով: Այդպես են հայտնաբերվել Զոգի, Մեղրաձորի, Համ-վաչիմանի, Հանքավանի հանքավայրերը և շարունակվում են որոնումները Տանձուտի, Դիլիջանի և այլ տեղամասերում: Նույն ճանապարհով Հաղարծինի երկաթահանքի տիպի երևակումներ են հայտնաբերվել Մարց գետի հովտում: Շատ դեպքերում հին փորվածքների ուսումնասիրութիւնները հետախուզման ընթացքում օգնում են հանքավայրերի կառուցվածքը հասկանալուն: Հրազդա-



նի երկաթի հանքավայրի հետախուզման ժամանակ նրանք որոշիչ հանդիսացան, նշելով հանքային մարմինների շերտավոր կառուցվածքը և դրա հիման վրա հետախուզության ամբողջ հետագա ընթացքը:

Ներկայումս երկրաբանների կողմից ջանքեր են թափվում պարզելու ապատիտ-մաքնետիտային հանքաքարի կոորդիններից ձուլման գործի թափոնների մեջ գտնվելու հանգամանքը՝ Մարմարիկի աջափնյա ավազանի, Օշականի, Տաճարաբակի հին բնակատեղիներում: Այս փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ հնում կապուտանի տիպի շահագործված հանքավայրեր գոյություն են ունեցել նաև այլ տեղերում: Մեծամորում ստացված տվյալները հիմք են տալիս վերանայելու Հայաստանի անագաբերության մասին մինչև այժմ տարածված բացասական կարծիքը:

Հին փորվածքների նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց տեսակներն ընտրելիս, հաշվի են առնվել հանքային մարմինների ձևը, տեղադրման պայմանները, ռելիեֆի առանձնահատկությունները և, ըստ այնմ, աշխատանքների տարբեր փուլերում օգտագործվել են շահագործման ինչպես բաց, նույնպես և ստորգետնյա եղանակներ: Զոդի հանքավայրի օրինակով ստորգետնյա փորվածքները հասնում են մինչև 150 մ խորության: Մասնագիտական բարձր ունակությունների մասին են վկայում նաև ցրոնային հանքավայրերի շահագործման օրինակները: Ավազների մեջ օգտակար հանածոյի տեղաբաշխման օրինաչափություններից և կառուցվածքից ելնելով, մի դեպքում նրանք լվացվել են բաց եղանակով՝ լրիվ (Զոդ), այլ դեպքում՝ ստորգետնյա փորվածքներով, հետապնդելով բուն ոսկեքեր ավազաշերտը (Դիլիջան):

Այսպիսով, միանգամայն ակնհեր է, որ հին լեռնահանքային գործի և մետաղամշակության ուսումնասիրությունները ընդհանուր պատմական նշանակությունից բացի, նաև խիստ այժմեական են: Այս գործը գիտական ամուր հիմքերի վրա դնելու երկրորդ հիմնական պայմանը հնավայրերի թվագրումն ու այդ հիման վրա նրանց դասակարգումն է: Ներկայումս մենք միայն կցկտուր տեղեկություններ ունենք մի քանի հանքավայրերի շահագործման ժամանակագրության վերաբերյալ: Հնավայրերի ճնշող մեծամասնությունը մնում է դեռևս չթվագրված և չուսումնասիրված:

Նրկրաբանության պատմությանը և հնագիտությանը վերաբերող գիտության այս նոր բնագավառի լուրջ ուսումնասիրությունների սկիզբը դրվեց Մեծամորում, 1965 թվականին, Հայկական ՍՍՀ

գիտությունների տեղեկատվության կոմպլեքսային արշավախմբի աշխատանքներով:

Մեծամորի հին բնակատեղին գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնում, պատմական Մեծամոր գետի ակունքների մոտ, միջին չորրորդական հրաբխային բլուրների վրա: Արշավախմբի պեղումներից ստացված նյութերը և բնակավայրի տեղագրության նախնական տվյալները թույլ են տալիս ենթադրելու այստեղ բարձր զարգացման հասած մշակույթի գոյությունն ու նրա հարատևությունը: Ընդհանուր հատակագծում ներկայումս պարզորոշ կերպով առանձնանում են դամբարանադաշտը, ավանը՝ տեղագրված պաշտպանական կառուցվածքներից դուրս, ջրային պաշտպանական գոտին և պաշտպանական արտաքին պարիսպը, պարսպից ներս՝ հարթավայրային մասում տեղադրված և բնակչության ստորին խավերին հատկացված թաղամասերը, հզոր պարիսպներով պատված միջնաբերդը, որի ներքին դարավանդներում են կենտրոնացած գլխավոր արտադրական շինությունները (ձուլարաններ, հարկադրանքային կառուցվածքներ և այլն, իսկ վերին դարավանդներում և գագաթին՝ բազմաթիվ տաճարական և պաշտամունքային այլ կառուցվածքները:

Մշակութային հուշակոթողի հաստությունը միջնաբերդի ուսումնասիրված մասում հասնում է մինչև 7,0 մետրի, պարունակում է հինգ լավ արտահայտված շերտ և մի քանի ենթաշերտեր, որոնք թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակից մինչև I հազարամյակի սկիզբը: Բլուրի լանջերին տեղ-տեղ պահպանված է նաև միջնադարյան (9—13-րդ դդ.) շերտ:

Պեղումներից հայտնաբերված հարուստ նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս նրանց ծագումնաբանական սերտ կապը Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված բազմաթիվ այլ հուշարձանների նյութերի հետ, որոնք հանդիսանում են տեղաբնիկների հարատևող ընդհանուր մշակույթի զարգացման առանձին օղակները:

Մեծամորում ստացված տվյալները ներկայումս թույլ են տալիս խոսելու այստեղ մետաղաձուլության և նրան հարակից այլ արտադրությունների խոշոր ու կենտրոնացված տնտեսության գոյության մասին: Ձուլման գործի, զարդարանքների արտադրության և շինարարական նպատակներով տեղաբնիկների կողմից օգտագործված մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների շարքում այժմ հաստատված են՝ պղինձը (հանքանյութ), կապա-



րը, ցինկը, մկնդեղը (հանքանյութ), ծարիրը, մանգանը, անագը (հանքանյութ), ոսկին (ձուլածո), ազատը, յաշման, կվարցը, օծաբարերը, կավահողը, հրաբխային խարամները և տուֆերը, բազալտը և որպես օժանդակ նյութ՝ ոսկորը: Խարամները, կավը և ոսկորը հանդիսանում են տեղական հումք, տուֆը և բազալտը բերվել են բնակատեղիից 5—6 կմ հեռավորության վրա գտնվող բարհանքերից, իսկ հումքի մնացած տեսակների հայթայթման վայրեր այս կամ այն հավանականությամբ կարելի է մատնանշել Կաղզվանի (պղինձ, բազմամետաղներ, մկնդեղ), Մեղրաձորի (ոսկի), Սարիգյուղի (մանգան, ազատ) և Մաղկունյաց (անագ) հանքային դաշտերը:

Մեծամորում լեռնամետաղածուլության արտադրական գործունեության ընդհանուր շղթայում ինքնուրույն և կարևոր օղակ է հանդիսանում հանքանյութերի և օժանդակ նյութերի մանրացումը, հարստացումն ու կիսաֆաբրիկատների արտադրությունը: Հայտնաբերվել են նշված նպատակներին ծառայող բազմաթիվ բարե սանդեր, սանդղոթներ, տրորիչներ, աղացներ, ինչպես նաև հսկայական ժայռափոր կառուցվածքներ: Վերջիններս մեծ բուրքի հյուսիսային լանջին զբաղեցնում են 0,5 հա տարածություն և կիսով չափ արդեն պեղված են:

Իրենց տեսակի մեջ առաջժմ միակ՝ ժայռափոր այս կառուցվածքները ծառայել են կավի և մանրած ոսկրի ջրային խառնուրդից մեխանիկական անջատման միջոցով ձուլման նպատակներով օգտագործվող կիսաֆաբրիկատների արտադրությանը: Իրենց բնութթով նրանք դասվում են հարստացման հարմարանքների շարքը: Ներկայումս հնարավոր է զանազանել հարստացման ժայռափոր կառուցվածքների հասակային երեք խումբ: Բնականաբար ամենալրիվ պահպանվածը ամենաերիտասարդն է, որ վերագրվում է մ. թ. ա. I հազարամյակի սկզբին: Այն բաղկացած է միմյանց հետ սերտորեն կապված հանգուցներից: Կառուցվածքների գլխամասում՝ ժայռի մեջ կտրված վերին դարավանդի վրա տեղադրված է քառանկյունի խառնուրդի ավազանը 30 մ<sup>3</sup> տարողությամբ, որը ժայռափոր առվակների միջոցով միանում է ներքին դարավանդի վրա փորված՝ 13—14 մ<sup>3</sup> ընդհանուր տարողությամբ 5 դրանաձև հորերի հետ: Վերջիններս իրենց հերթին թեք հատակներով միջանցքների միջոցով միանում են երկհարկանի ժայռափոր երեք շինությունների հետ, որոնց նկուղային հարկերը կատարել են պահեստի դեր:

Հարստացման մյուս հրկու կառուցվածքները ավելի հին են և պայմանականորեն վերագրվում են մ.թ.ա III և II հազարամյակներին: Վերը նկարագրված հարստացման կառուցվածքը հենքի հետ համեմատած տեխնիկական ավելի կատարելագործված է, որը արտահայտվում է տարածության մեջ տեխնոլոգիական առանձին հանգույցների ռացիոնալ տեղաբաշխման, կոնստրուկտիվ էլեմենտների կատարելության, քարի սրբատաշ մշակման և այլ առանձնահատկություններում, բայց մեկ փուլում թողարկվող արտադրանքի քանակությամբ այն զգալիորեն ավելի փոքր է հենքից:

Առանձնահատուկ նշանակություն ունեն մետաղաձուլության վերաբերյալ Մեծամորում ստացված տվյալները: Տնտեսության այս բնագավառին են վերագրվում բոլոր այն արտադրությունները, որոնք կապված են ձուլման գործի հետ: Առաջին տվյալները այս բնագավառում ստացվել են հիմնականում մեծ բլուրի լանջերին ամենուրեք թափված ձուլարանների թափոնների և առաջին հերթին խարամների և ակվածքների նմուշների ուսումնասիրությունից, որոնք մինչև պեղումներ սկսելը բավարար հիմք էին տալիս մետաղաձուլության մասին եզրահանգումներ անելու ներկայումս հաստատված է ձուլման հետ կապված արտադրության վեց գլխավոր ուղղությունների առկայությունը: Դրանք են՝ բրոնզի արտադրությունը (14 տիպ), հեմատիտի հայելանման թիթեղիկների արտադրությունը, ոսկու ձուլումը, մածուկի (պաստա) արտադրությունը (5 տիպ), ապակու, ջնարակի և ներկանյութերի արտադրությունը. ընդամենը ձուլման 24 տիպ: Ըստ այնմ Մեծամորում կարելի է ենթադրել ձուլման հարմարանքների առկալն 5—6 տեսակ: Ներկայումս պեղումների միջոցով հայտնաբերվել է 23 ձուլման հնոց, որոնք ըստ կառուցվածքային առանձնահատկությունների, պատկանում են երկու հիմնական խմբի՝ մեծ աղյուսաշար հնոցներ (11 հատ) և գլանաձև կավակերտ հնոցներ (12 հատ): Բոլոր հայտնաբերված հնոցներում ձուլվել են կավի և ոսկրի խառնուրդից ստացված պատրաստուկները: Ձուլման խարամների տարածման օրինաչափություններից ելնելով, միջնաբերդի տերիտորիայում ենթադրվում է 200-ից ավելի հնոցների գոյությունը. հետագա պեղումները, անկասկած, կհայտնաբերեն ձուլման հնոցների այլ տիպեր:

Պեղված հնոցները վերագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբներին, բայց ձուլման գործի



հետքեր հայտնաբերվել են մշակութային բոլոր շերտերում, ընդհուպ մինչև մ. թ. ա. III հազարամյակը:

Ձուլման հետ կապված արտադրության տրամաբանական փախճանը հանդիսացող պատրաստի իրերի ստացման արհեստանոցներ առայժմ չեն պեղված, բայց նրանց գոյության մասին որոշակիորեն խոսում են բազմաթիվ փաստեր, այդ թվում հայտնաբերված ձուլման կաղապարները, պատրաստի իրերը, ձուլման ավելցուկների թափոնները և այլն:

Մեծամորում մետաղագործությանը զուգընթաց զարգացման բարձր աստիճանի էին հասել նաև մի շարք այլ արհեստներ, որոնց մեջ առաջնակարգ տեղ են գրավում խեցեգործությունը, քարակոփությունը, մանր իրերի պերճանքի առարկաների արտադրությունը և այլն:

Մեծամորի բրուտների արտադրանքի մեջ մեծ տեղ է գրավել շինարարական հում աղյուսի արտադրանքը, որով կառուցել են ոչ միայն բնակարանների, այլև Մեծամորի մեծ վառարանների և արհեստանոցների պատերը: Հում կավից են պատրաստվել նաև թոնրատիպ հնոցներն ու փոքրածավալ քառանկյունաձև վառարանները, որոնց պատերը կառուցված են դեպի ներս մի փոքր գոգավորվող մեկական կավի տախտակով, իսկ վերևից ծածկված են քառակող կափարիչով, որն ունի կլոր անցք:

Հայտնաբերվել են ձուլման պրոցեսի հետ առնչվող տարատեսակ կավի իրեր, ինչպես օրինակ, սալիկներ (կոկած, փայլեցրած մակերեսով, իսկ հակառակ, պատին ամրացվող երեսը մանր ավազահատիկախառն, անփայլ), նավաձև և զլանաձև խողովակներ, կողքից անցքով: Բոլորը մրի հետքեր ունեն, հայտնաբերվել են մեծ մասամբ մեծ հնոցներ՝ վառարանների մոտ և անշուշտ կապ ունեն ձուլման վառարանների հետ:

Հայտնաբերված բազմաքանակ և բազմատեսակ խեցանոթները ծառայել են մեծ մասամբ երկրագործական և անասնապահական մթերքների և այլ սննդամթերքների մշակմանն ու պահպանմանը:

Մեծամորի խեցեղենին բնորոշ են հետևյալ ձևերը՝ կարասներ, թաղարներ, վոժեր, փարչեր, տափոթներ, թասեր, քրեղաններ, փետեատիպ կավամաններ, ձիթաճրագներ, գավիթ, ձագարներ, քամիչներ, մինիատյուր կավամաններ և այլն: Այս բոլորը կատարված են մեծ վարպետությամբ և ճաշակով, աչքի են ընկնում բազմատեսակ զարդանախշերով, որոնց կոմպոզիցիաներում հա-

ճախակի կարելի է տեսնել պաշտամունքային մոտիվներ՝ գալարապտույտ օձեր (երբեմն երկգլխանի), ցորենի հասկ և ջրի վազը պատկերող զարդանախշեր և այլն:

Մեծամորի բրոտների ձեռքով են պատրաստվել նաև պաշտամունքային բնույթի մի շարք իրեր, կառուցվածքներ:

Հայտնաբերվել են տարատեսակ կանթեղներ-խնկամաններ, որոնց շարքում առանձնանում է յոթ փողանի ջահը, որը հավանաբար յոթ լուսատուներին է ծառայել: «Յոթ» թվանշանը սրբազան է եղել հնագույն ժամանակներից ի վեր<sup>1</sup>:

Պաշտամունքին են ծառայել նաև Մեծամորում հայտնաբերված սրբազան բլիթներ-հացերը նախշող սվաստիկա, վարդյակ և արևի սկավառակ պատկերող կավե մի շարք դրոշմիչ-կնիքները:

Մեծամորի ինքնատիպ սրբարանները կենտրոնական զոհարաններով, նրանցից աջ և ձախ տարածվող տարանշանակ բաժանմունքներով, կրակարաններով հանդերձ, նույնպես կավակերտ են:

Բացի գլխավոր սրբարանից, առանձին «արհեստանոցներում» հայտնաբերվել են հավանաբար տվյալ արհեստը հովանավորող աստծու պաշտամունքին ծառայող փոքրիկ կավակերտ կրակարաններ:

Վերջապես Մեծամորում հայտնաբերվել է կավե եռանկյունաձև տախտակիկ-հմայիլ՝ նշանագրերով: Այն Մեծամորի կարևորագույն հայտնագործություններից մեկն է, հույս է ներշնչում, որ վերջինը չի լինի:

Այսպիսով, հայտնաբերված նյութերն ապացուցում են, որ Մեծամորի բնակիչների կյանքում մեծ տեղ է գրավել նաև խնցեգործությունը, որն ինչպես տեսանք մասսայական լայն արտադրանք է ունեցել, բաժանված է եղել տարբեր մասնաճյուղերի և նշանակալից դեր է կատարել տնտեսության մեջ, կենցաղում և հավատալիքների շարքում:

Բացի վերոհիշյալ արհեստներից, Մեծամորում բարձր զարգացման և վարպետության է հասել նաև քարակոփությունը:

Տեղի վարպետները լավ ծանոթ են եղել տարատեսակ քարերի մշակման եղանակին: Նրանց համար որպես հումք են ծառայել

<sup>1</sup> Ուշագրավ է «Աշխարհացույց»-ում պահպանված՝ «եօթն փորակեան բագինք» հասկացությունը, տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 50—51, 109:



հրաբխային ծագում ունեցող տեղական խարամբ, բազալտը, սև և կարմիր տուֆը, օբսիդաքարը, օձաքարը, կալծքարը, ագաթը, սարդիոնը և այլն:

Այս քարերից բազմաթիվ և բազմատեսակ գործիքներ են պատրաստվել, որոնք ծառայել են հանքամշակման (տարատեսակ կացիններ-մուրճեր, տրորիչներ-ծեծիչներ), ձուլման գործին (ձուլ-ծուխյանը (աղորիքներ, սանդեր-սանդկոթներ, տրորիչներ, մանգաղի ներդիրներ, սրոցաքարեր) և այլն:

Մեծամորում հայտնի են ժայռափոր մի շարք շինություններ-օրինակ վերը նկարագրված հարստացման կառուցվածքները ներկայումս առաջինը և միակը կարելի է համարել Հին Արևելքի մեզ հայտնի մշակույթում:

Մեծամորը հարուստ է նաև ժայռափոր նշանագրերով, պաշտամունքի հետ կապված մի շարք յուրօրինակ կառուցվածքներով, որոնցում իրենց արտացոլումն են գտել ջրի և կրակի, երկնային լուսատուների հետ կապված պաշտամունքը:

Տեղի վարպետները քարից կերտել են ինչպես կուռքեր, ֆալլիկ քանդակներ, այնպես էլ մոնումենտալ արձաններ, որոնցից պահպանվել է տուֆ քարից կերտած կենդանու եղջյուրը, բնական մեծությամբ: Հայտնաբերված կուռքերը, շնայած ոճավորված են և բավականաչափ պարզունակ, սակայն նրանց վրա մեծ վարպետությամբ և մանրամասնորեն քանդակված են պերճանքի առարկաներ՝ վզնոցներ, ականջօղեր և այլն:

Մեծամորի քարայրներից մեկում գտնվող քարակույի սարկոֆագը ենթադրել է տալիս բարձր խավի, հարուստների դամբարանների գոյությունը այդ քարայրներում:

Բացի վերոհիշյալներից, Մեծամորում քարը նյութ է ծառայել նաև զենքեր պատրաստելու համար, որի մասին են վկայում հայտնաբերված օբսիդաքարե նետասլաքները, տեղի ծայրը, գուրդը և այլն:

Մեծամորի վարպետների նուրբ աշխատանքի, հմտության վկաներն են տարատեսակ բնական կիսաթանկարժեք քարերից պատրաստված բազմազան ուլունքները:

Բազմաքանակ են հատկապես սերդուլիկից և ագաթից պատրաստված օբյեկտները, որոնք հայտնաբերվել են և՛ միջնաբերդում, և՛ դամբարաններում: Միջնաբերդի պեղումների ժամանակ հայտնաբերվել են սարդիոնի անմշակ կտորներ, որոնք հավաստում են այդ ուլունքների՝ տեղում պատրաստված լինելը:

Սարդիոնն ուլունքների մեծ մասը վարդագույն են, ոսկեգույն կամ սաթի գույնի և ունեն հղկած, կոկած փայլուն մակերես: Աչքի են ընկնում իրենց տարատեսակ ձևերով:

Հանդիպում են ուլունքներ տարբեր ձևերի՝ ակոսավոր-կանխարադարձ, ուռուցիկ կողով (հաճախ նրանց կողների թիվը հասնում է ութի), երկկոնիկ, գնդաձև: Սակավ հանդիպում են նաև տափակ կողերով ուլունքներ: Սակայն Մեծամորի համար բնորոշ են «կոտորած» («рубленые») ուլունքներ զմուռսա-կարմրավուն», հասպիսաձև սարդիոնից:

Հայտնաբերված ագաթն ուլունքները մեծ մասամբ երկարավուն, տակառաձև են, որոնց շագանակագույն ֆոնի վրա գծազրկվում են դեղնասպիտակավուն գոտիներ, ժապավեններ:

Սակայն քարն ուլունքների կողքին, Մեծամորում ավելի լայն զարգացում է ստացել տարատեսակ արհեստական նյութերից, գլխավորապես մածուկից և ապակենման մասսայից պատրաստված պերճանքի առարկաների արտադրությունը: Զուլման եղանակով ստացված այդ առարկաների արտադրությունը իր մասշտաբներով հավանաբար չի զիջել հին մեծամորցիների գլխավոր զբաղմունքին՝ մետաղագործությանը:

Զնայած Մեծամորում նման իրերի ձուլման վառարաններ դեռևս չեն հայտնաբերվել, սակայն գտնվել են փոքր ծավալի զարդեր-ուլունքների ձուլման կաղապար, այդ իրերի խոտանը, նաև ձուլման հետևանքով առաջացած թեթևակշիռ խարամի կոտակումները, ինչպես նաև պատրաստի բազմաթիվ իրեր:

Ըստ նյութի, Մեծամորում ստացված մանր իրերը, զարդարանքի առարկաները կարելի է հետևյալ խմբերի բաժանել՝ մածուկից, ապակենման մասսայից, հախճապակուց, նուան գույնի խեժանման մասսայից պատրաստված իրեր և այլն:

Մեծամորի բանիմաց վարպետները մածուկից և հախճապակուց պատրաստել են ուլունքներ, կոճակներ, կախիկներ-հմայիկներ, որոնց համար ամենասիրված գույներն են եղել սպիտակը, մոխրագույնը, երկնագույնը, ծովի ալիքի գույնը, փիրուզագույնը և այլն:

Նրանք շատ հաճախ ընդօրինակել են կիսաթանկարժեք քարի ուլունքների ձևերը և գունային խաղերը:

Օրինակ, կան ագաթն ուլունքներին նմանեցվածներ՝ երկարավուն գլանաձև մոխրագույն մածուկից ուլունքներ, որոնք զարդարված են ընդլայնակի սպիտակ ժապավեններով: Հանդիպում են անպամ ալմադիսի ուլունքներ, որոնց վրա ամենայն մանրամասնու-



թշամբ, գունային խաղով ընդգծված են ագաթի կառուցվածքային յուրահատկութիւնները:

Հակառակ ամուր քարատեսակների, ճկուն մասսայի հնարավորութիւնները թույլ էին տալիս ցանկացած ձևերը ստանալու, այդ իսկ պատճառով արհեստական նյութերից ստացված զարդաբանքներն աչքի են ընկնում իրենց բազմաձևութիւնով:

Հայտնաբերվել են նրկնագույն և կանաչավուն մածուկից ուլունքներ կանելարազարդ, դանգակաձև, տափակ քառանկյունաձև, եռանկյունաձև շրջանակներ, կախիկներ, զարդարված ցանցաձև գծերով: Հանդիպում են նաև օղակաձև, իլիկազլուխ, շեղանկյունաձև գծածածկ ուլունքներ:

Ուշագրութիւն է արժանի նրկնագույն մածուկից պատրաստված սակրաձև ուլունքը: Հաճախակի հանդիպում են մածուկից մանր ուլունքահատիկների շարաններ:

Սակայն հախճապակուց Մեծամորում ոչ միայն զարդարանքներ են պատրաստել: Գտնվել են նաև դահլիճների պատերը հարդարող քարե սալերի բեկորներ՝ երեսապատված նրկնագույն և կանաչավուն հախճապակով:

Մի առանձին խումբ են կազմում խեղճանման նյութից պատրաստված զարդերը, որոնք ունեն նույն հատիկի թափանցիկ գույն և հանդես են գալիս նույնպես բազմաթիվ ձևերով:

Արհեստի բարձր նմուշների շարքը կարելի է դասել նաև ապակե ուլունքները, մեծ մասամբ գնդաձև, երկկոնիկ, սկավառակաձև, որոնք աչքի են ընկնում իրենց թարմութիւնը դեռևս պահպանած ջինջ և ցայտուն գույներով: Նրանք բոլորը թափանցիկ են, երկնագույն, կանաչավուն, կաթնագույն, փիրուզագույն:

Այսպիսով, արհեստական նյութերից պատրաստված պերճանքի առարկաները ապացուցում են, որ Մեծամորում այդ արհեստը ևս զարգացման բարձր մակարդակ է ունեցել:

Մեծամորի վերոհիշյալ զարդարանքները իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի Հայկական լեռնաշխարհի մի շարք հնավայրերում: Օրինակ, Կարմիր բլուրի քաղաքի «Նախատրարտական» բնակատեղիում և դամբարաններում, Դվինի համապատասխան շերտերում, նոր Բայազետի դամբարաններում և այլուր: Չնայած բացասված չէ նրանց պատրաստելու հնարավորութիւնը վերոհիշյալ հնավայրերում, սակայն նրանց արտադրութիւնը Մեծամորում ականառու է:

Բացի վերոհիշյալ արհեստներից, Մեծամորում զբաղվել են նաև ոսկրի մշակմամբ, կաշեգործությամբ, մանածագործությամբ և այլ արհեստներով, սակայն այդ ձուլների զարգացման մակարդակը բնորոշող նյութերը դեռևս սակավաթիվ են:

Մեծամորի պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի շարքում առանձնահատուկ տեղ ունեն պաշտամունքային կառուցվածքները, որոնք թվով մի քանի տասնյակ են: Այս բնագավառում ևս ի հայտ է գալիս միանգամայն որոշակի դիֆերենցվածություն, որը նախ և առաջ հաստատվում է առանձնացված քրմական դասի, պաշտամունքային տարբեր խմբերի և նրանց նվիրված հատուկ տաճարական և այլ կառուցվածքների գոյությամբ:

Հայկական լեռնաշխարհին հարեան մշակութային կենտրոններից ստացված տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ Մեծամորում արտադրական գործունեությունը նույնպես տնօրինվել է քրմական դասի կողմից, համենայն դեպս այնպիսի որոշիչ օղակներ, որպիսիք են տեխնոլոգիական հնարանքների պահպանման, կատարելագործման և սերունդներին փոխանցման գործը:

Մեծամորի պաշտամունքային շինությունների մեջ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում փոքր բլուրի ժայռափոր խումբը, որտեղ ենթադրվում են լուսատուների պաշտամունքին և դիտարկմանը հարմարեցված կառուցվածքներ: Պաշտամունքային կառուցվածքների մեծ մասը զուգորդված է լուսատուներ խորհրդանշող ժայռափոր նշաններով: Բազմաճյուղ արտադրական գործունեության զեկավարումը, տեխնոլոգիական քարդ միջոցների պահպանումն ու սերունդներին փոխանցումը, ինչպես նաև լուսատուների դիտարկման արդյունքների պահպանումն անխրադործելի են առանց լավ զարգացած գրի գոյության և ելնելով այդ դրույթից, հավանական պետք է համարել Մեծամորում տարբեր նպատակների ծառայող գրապահոցների հայտնաբերումը:

Արդեն այժմ ստացված տվյալները ապացուցում են Մեծամորում զարգացման բարձր մակարդակի հասած արտադրական հարաբերությունների գոյությունը, որն իր հերթին պայմանավորում է հասարակական հարաբերությունների համապատասխան աստիճանի գոյությունը:

Մեծամորից ստացվող հարուստ նյութերը հիմք են տալիս հուսալու, որ հետագա ուսումնասիրությունները կօգնեն լուսաբանելու մի շարք հանգուցային հարցեր, այդ թվում հատկապես Հայկական



К. А. МКРТЧЯН, Э. В. ХАНЗАДЯН

## МЕТАЛЛУРГИЯ И ГОРНОРУДНОЕ ДЕЛО В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

### Резюме

Во второй половине XIX столетия среди исследователей истории и культуры древнего Востока сложилось представление об Армянском нагорье как одном из древнейших центров возникновения и развития индустрии металла вообще и особенно как «эпицентра» культуры железного века. Представления эти в последние годы поддерживаются и развиваются советскими исследователями, среди которых особо следует отметить работы Е. Н. Черных.

Согласно Г. Р. Холлу, «египтяне, несомненно, получили навык обработки меди из Месопотамии, через Сирию, вероятно, от представителей «арменоидной» расы, которые появились в Нижнем Египте, по-видимому, еще задолго до конца додинастического периода... Вполне вероятно, что «арменоиды», если они действительно принесли с собой медь, добывали ее первоначально из какого-то более северного источника, а именно в горах современной Армении, где, без сомнения, добывали ее вначале и месопотамцы».

С. К. Дикшит приводит ценное высказывание Г. Чайлда о том, что открытие эффективного метода плавки железа, намного опередившее его распространение, принадлежит племенам Армянского нагорья. Кроме того, С. К. Дикшит, поддерживая мнение других ученых (Ж. Моргана, Т. Ричарда), отмечает, что «революционные перевороты, явившиеся следствием начала железного века, произошли, по-видимому, во второй половине II тыс. до н. э.... До областей, расположенных дальше от, так сказать, эпицентра революции железного века, находящегося на Кавказе, в горах Армении, волна этой революции докатилась в целом позднее...» и «наконец, все данные говорят за то, что честь и приоритет введения цивилизации железного века принадлежит каким-то индоевропейским племенам, среди которых наиболее почетное место, несомненно, занимают хетты Армении».

Вывоз металла из Армянского нагорья осуществлялся как мирным путем посредством торгового обмена, даров, и т. д.,

так и путем военной экспансии. Примечательно, что торговый обмен медью согласно Ландсбергеру, осуществлялся посредством специализировавшихся общин.

В древнеегипетских и ассиро-вавилонских источниках как районы поставок наиболее часто упоминаются Армянский Тавр, страна Алше (армянский Ахдзник), бассейны оз. Ван и Урмия, а в греческих источниках—Малая Армения. Это обстоятельство говорит о развитом горнометаллургическом производстве в указанных районах и, по-видимому, объясняется влиянием непосредственных торговых и других сношений преимущественно с указанными пограничными районами.

Достоверные упоминания о вывозе металла, а возможно, и рудного сырья в ассирийских источниках мы находим начиная с XIII в. до н. э. в надписях Салманасара I и Тукульты-Нинурты I в виде выражений «тяжкой подати гор», «богатства гор», получаемые из стран Наири. В более поздних источниках IX—VII вв. до н. э. имеются прямые указания о вывозе меди, бронзы, золота, серебра, железа и др. видов сырья или готовых изделий. О масштабах вывоза можно судить на примере данных, приводимых в анналах Саргона II в части описания похода 714 г. до н. э., где говорится, что из Мусасира было вывезено около 2 тонн золота, десять тонн серебра, сотни тонн бронзы и мн. др.

Много сведений о рудных богатствах Армении имеется в греческих и средневековых армянских источниках.

Интенсивное развитие геологических исследований и горнодобывающей промышленности за последние десятилетия привело к открытию только на территории Армянской ССР свыше 600 пунктов древних разработок месторождений и переработки руд.

Предварительные данные по изучению систем древних разработок показывают, что в зависимости от строения рудных тел, стадии работ, условий рельефа и т. д. применялись различные виды горных выработок, как открытых, так и подземных (траншеи, карьеры, закопушки, наклонки, шурфы, шахты, штреки, камеры и т. д.).

Для окончания первой стадии изучения—систематизации памятников—остро ощущается недостаток материалов по их датировке. В настоящее время лишь предположительно можно говорить о разработках Зодского месторождения в III тыс. до н. э., конце II тыс. до н. э. и в первых веках нашей эры; о разработках Меградзорского месторождения в конце II тыс. до н. э., Гамзачиманского месторождения—в конце I тыс. до н. э., о существовании железорудных плавок начиная с XIII в. до н. э.



Огромное количество памятников, остающихся пока совершенно не изученными, обязывает приступить к их планомерному и комплексному изучению. Первые серьезные работы в этом направлении начаты на одном из интереснейших памятников древнейшего горнометаллургического производства в Армении—на Мецаморе, систематические исследования которого начаты с 1965 г. Мецаморской комплексной экспедицией АН Армянской ССР.

Древнее поселение располагается в пределах среднечетвертичных (ашель-мустье) вулканических конусов, возвышающихся в центре Араратской равнины у истоков р. Мецамор. Предварительные данные о расселении различных социальных групп населения в общем плане застройки позволяют говорить о высшем уровне развития общества. Здесь довольно отчетливо разграничиваются некрополь, расположенный вне укрепленной части; водный оборонительный рубеж и внешняя крепостная стена; жилые кварталы низших сословий внутри укрепленной части, за пределами цитадели: собственно цитадель с мощными укреплениями, внутри которой располагались главные производственные комплексы (обогатительные и металлургические сооружения), а в наиболее удобных и хорошо защищенных участках—культовые сооружения и жилые строения знати.

В пределах городища установлено пять культурных слоев, охватывающих промежуток времени с начала III тыс. до н. э. до начала I тыс. до н. э., и локально развитый слой средневековья (XII—XIII вв.).

Обильный археологический материал, полученный на Мецаморе, имеет свои соответствия в многочисленных памятниках Армянского нагорья, вместе с ними представляя единую, генетически взаимосвязанную и длительно развивающуюся культуру аборигенного населения.

В результате четырехгодичных исследований устанавливается определяющая черта хозяйственного уклада Мецамора как центра древнейшего горнометаллургического производства.

Важным и самостоятельным звеном в горнометаллургической производственной деятельности на Мецаморе является процесс дробления и обогащения руд и подсобных материалов, производство различных полуфабрикатов. На северном склоне большого холма на площади 0,5 га частично раскопаны уникальные обогатительные скальные сооружения, предназначенные для производства смеси из молотой кости и глины, путем гравитационной сепарации.

Исключительный интерес представляют полученные на Мецаморе данные по металлургии. В эту обширную область

хозяйственной деятельности включаются все виды производств, связанные с процессом плавки. Уже сейчас установлено шесть основных направлений в этой области: производство бронзы (14 типов), гематитовых пластинок, золотых изделий, стекла, пасты (5 типов), глазури, красок (всего 24 вида плавки).

В настоящее время раскопками вскрыты 23 плавильные печи, группирующиеся в две системы: большие печи с кирпичной кладкой и глинобитные малые цилиндрические печи.

Вскрытые плавильни относятся к концу II и началу I тыс. до н. э., однако следы металлургического производства (в частности, производства бронзы) обнаружены во всех древних культурных слоях, вплоть до слоя III тыс. до н. э.

В Мецаморе наряду с металлургией параллельно развивался и ряд других ремесел, среди которых выделяются гончарное дело, обработка камня, искусство изготовления предметов украшения и т. д.

В производстве мецаморских гончаров большое место занимало изготовление сырцовых кирпичей, которые использовались не только для постройки жилищ, но и для помещений больших и малых плавильных печей и мастерских.

Богатая керамика, обнаруженная на Мецаморе, служила для обработки и хранения продуктов земледелия и скотоводства.

Для мецаморской керамики характерными являются большие и малые карасы, кувшины, горшки, вазы, кубки, кружки, разнообразные миски, маслoбойки, тарелкообразная посуда, бокалы. Все это изготовлено с большим мастерством и вкусом.

Керамика Мецамора выделяется богатством орнаментации, в композиции которой часто можно видеть растительные мотивы: изображение пшеничных колосьев, мотивы культового характера, например изображение рельефных змей, двуглавых драконов; иногда пучки извилистых линий отображают струи воды. Уникальное святилище с центральным семиглавым алтарем и боковыми сооружениями, тоже глинобитное.

Наконец в Мецаморе найдена глиняная треугольная табличка-амулет со знаками, напоминающими письменность, которая является одной из важнейших находок Мецамора.

Местные мастера воссоздали из камня образы идолов, фаллические изваяния и разнообразные орудия труда.

Свидетелями высокого мастерства мецаморцев являются различные бусы, среди которых из естественных полудрагоценных камней преобладают сердоликовые и агатовые.



Однако наряду с каменными бусами более широкое применение получило производство мелких предметов украшения, изготовленных из различных искусственных материалов, главным образом пасты и стекла. Масштабы производства их путем плавки, возможно, не уступали главному занятию древних мецаморцев—металлургии.

Вышеуказанные украшения из Мецамора имеют свои аналоги, которые встречаются в ряде памятников Армянского нагорья, относящихся к концу II и началу I тысячелетия до н. э., как, например, в нижнем слое и погребениях Кармир-Блура, в соответствующих слоях Двина, в погребениях Нор-Баязета и т. д.

Дальнейшие исследования Мецамора должны ответить на ряд кардинальных вопросов древнейшей истории Армянского нагорья.